ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
"ՀՐԱԶԴԱՆԻ N 7 ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ" ՊՈԱԿ

2302, ք. Հրազդան, Կաքավաձոր թաղամաս 1/4, էլ.փոստ
hrazdan school7@mail.ru

N 28
<< 19 >> 06. 2020թ.

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ ՌՈՄԱՆՈՍ ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ

Մեծարգո մարզպետ,

Տեղեկացնում եմ, որ տեխնոլոգիայի (4 դասաժամ, տղաների խումբ) ուսուցչի թափուր տեղի համար հայտարարված մրցույթի փաստաթղթերը ընդունվում են մինչև 2020թ. հուլիսի 14-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 14:00-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից: Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի ըստ կարգի:

Մրցույթը տեղի կունենա 2020թ. հուլիսի 17-ին՝ ժամը 15:00-ին:

Կից ներկայացնում եմ մրցույթի հայտարարությունը:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ ՏՆՕՐԵՆ ՀԱՍՄԻԿ ԱՍԱՏՐՅԱՆ

Digitally signed by ASATRYAN HASMIK 5109570450
Date: 2020.06.19 17:32:07 AMT

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Կոտայքի մարզի «Հրազդանի հ. 7 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ- տեխնոլոգիայի (4 դասաժամ, տղաների խումբ) ուսուցչի թափուր տեղի համար: Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է՝ ըստ դասաբաշխման: Մրցույթի մասնակիցների գիտելիքների եւ մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր եւ բանավոր՝ ըստ ՀՀ ԿԳ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի: Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է (Ձեւ 1),
2. Փաստաթուղթ (դիպլոմ)՝ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ,
3. Անձնագրի պատճենը,
4. Ինքնակենսագրություն (Ձեւ 4),
5. Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին եւ աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում),
6. Մեկ լուսանկար՝ 3x4 չափի,
7. Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք, 8. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաեւ զինգրքույկ: Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ: Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչեւ 2020թ. հուլիսի 14-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 14:00- ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից: Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի՝ ըստ կարգի: Մրցույթը տեղի կունենա 2020թ. հուլիսի 17-ին՝ ժամը 15:00-ին, Կոտայքի մարզի Հրազդանի հ. 7 միջնակարգ դպրոցում. հասցեն՝ ք. Հրազդան, Կաքավաձոր 1/4: Տեղեկությունների համար զանգահարել՝ (093) 23-76-97 հեռախոսահամարով